



ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

2012-2022

Քաղաքապետի ուղերձը

Ռազմավարական ծրագիրն ուղղված է Վանաձոր քաղաքի տնտեսության, սպորտի, մշակույթի, տուրիզմի և կրթության զարգացմանը:

Բազմակողմանի քննարկումներ անցած այս ծրագիրն իր մեջ ներառում է այն բոլոր հիմնական արժեքներն ու ուղղությունները որոնք անհրաժեշտ են Վանաձորի պայծառ ապագայի կերտման համար:

Իրատեսական ռազմավարությունը Վանաձորի քաղաքապետարանի և ամբողջ հասարակության համար հանդիսանում է ապագան կերտելու գործիք, ինչը չափազանց կակոր է համայնքի կայուն զարգացումն ապահովելու համար:

Երբեմնի ծաղկուն քաղաքը, որն ուներ վերոնշյալ բոլոր հնարավորությունները, այսօր ունի դրանք զարգացնելու նախադրյալները և աշխարհին ներկայանալու, որպես զարգացած ու սոցիալ-տնտեսական պոտենցիալ ունեցող ժամանակակից բնակավայր՝ իր բոլոր հնարավորություններով:

Չափազանց կարևորում են քաղաքի զարգացումն ապահովող ծրագրի բոլոր ուղղությունները և մաղթում մեզ՝ բոլորիս արգասաբեր գործունեությունն ի բարօրություն Վանաձոր քաղաքի փայլուն ապագայի:


Ռազմավարական ծրագրի հիմնական նպատակները.

- ☞ խթանում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը
- ☞ խթանում գյուղատնտեսական մթերքների ժամանակակից վերամշակմանը
- ☞ աջակցություն առողջարանային և մշակութային զբոսաշրջությանը
- ☞ նպաստում սպորտի զարգացմանը
- ☞ խթանում կրթական համակարգի զարգացմանը
- ☞ ենթակառուցվածքների կատարելագործում
- ☞ աջակցություն շրջակա միջավայրի պահպանության և կանաչ տարածքների ավելացմանը
- ☞ նպաստում գործազրկության մակարդակի նվազեցմանը
- ☞ խթանում օտարերկրյա ներդրումների ավելացմանը

📖 2. Ընդհանուր նկարագրություն

2.1. Հայաստանի Հանրապետություն

Հայաստանը գտնվում է Եվրոպայի և Ասիայի միջև՝ Հարավային Կովկասում: Հայաստանին սահմանակից են հյուսիսից՝ Վրաստանը, արևելքից՝ Ադրբեջանը, հարավից՝ Իրանը, արևմուտքից՝ Թուրքիան: Հայաստանի Հանրապետությունն ունի 29 հազար ք/կմ տարածք: Այն չունի ծովային սահման (չունի ելք դեպի ծով): Ամենամոտ նավահանգիստը Վրաստանի Փոթի քաղաքն է, որով ապահովվում է ելք դեպի Սև ծով և միջազգային ջրային տարածքներ: ՀՀ-ն լեռնային երկիր է, որի ամենացածր կետը ծովի մակարդակից 375 մ է (երկրի հյուսիսում), իսկ ամենաբարձր կետը՝ 4095 մ (Արագած լեռը): Հայաստանի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1850 մ է:



Հայաստանի Հանրապետությունը բաժանված է 10 մարզերի (ռեգիոնների): Լոռին Հայաստանի 3 հյուսիսային մարզերից մեկն է, սահմանակից է Վրաստանին:

2.2. Լոռու մարզ

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է երկրում (3789 քառ. կմ, ՀՀ տարածքի 12.7 %-ը) և ունի 281.8 հզր. բնակչություն, որից 165.5 հազարը՝ քաղաքային, 116.3 հազարը՝ գյուղական (2009 թ. ազգային վիճակագրական ծառայության տվյալներով): Լոռու մարզը սահմանակից է Շիրակի, Տավուշի, Կոտայքի և Արագածոտնի մարզերին, ինչպես նաև հյուսիսից սահմանակից է Վրաստանին:

Լոռու մարզի քաղաքային համայնքներն են Վանաձորը, Ալավերդին, Ախթալան, Թումանյանը, Շամլուղը, Սպիտակը, Տաշիրը և Ստեփանավանը: Լոռու վարչական կենտրոնը և ամենախոշոր քաղաքը Վանաձորն է: Մարզը հարուստ է բազմաբնույթ հուշարձաններով: Պետական պահպանության տակ են գտնվում մոտ 3000 պատմամշակութային հուշարձաններ: Առանձնապես ուշագրավ են Սանահինի ու Հաղպատի վանական համալիրները (ընդգրկված են UNESCO –ի համաշխարհային ժառանգության ցանկում), Օձունի համալիրը, Ախթալայի վանական համալիրն ու բերդը, Լոռիբերդի և Տաշիրի բերդի ավերակները, Գսեղի ս.Գրիգոր Բարձրաքաչ վանքը և այլն: Լոռու մարզով է անցնում Իրան – Վրաստան միջպետական մայրուղին, ինչպես նաև հարավկովկասյան երկաթուղին: Լոռու մարզում է գտնվում Հայաստանի ամենաերկար ավտոտրանսպորտային թունելը, որն անցնում է Բազումի Լեռնաշղթայի տակով և կազմում է Ստեփանավան - Վանաձոր հիմնական ավտոերթուղու մի մասը:

2.3. Վանաձոր

Վանաձորը Լոռու մարզկենտրոնն է: Զբաղեցնում է 2638 հեկտար մակերես: Քաղաքի կարգավիճակ ստացել է 1924 թվականից: Հեռավորությունը Երևանից ավտոմայրուղով 125 կմ է, երկաթգծով՝ 224 կմ: Քաղաքի զբաղեցրած մակերեսը ծովի մակերևույթից բարձր է 1353 մ:

Քաղաքի միջով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը: Վանաձորի վարչական տարածքում է Լոռի հանքային ջրի աղբյուրը: Քաղաքի միջով հոսող գետերը և քաղաքի վարչական տարածքից դուրս գտնվող դրանց վտակները վերականգնվող էներգետիկայի աղբյուր են (էներգետիկ ռեսուրսներ):

Վանաձորը ռեզիդնալ վարչական կենտրոն է, գտնվում է Երևան-Թբիլիսի միջպետական ճանապարհի կեսճանապարհին, ինչը հնարավորություն է ընձեռնում Վանաձորը դարձնել հայ-վրացական տնտեսական զարգացման կենտրոն և հիմնվելով առկա ազատ արտադրական տարածքների առկայության վրա՝ իրատեսական է Վանաձորի՝ մաքսային կենտրոն լինելը:

3. Վանաձոր քաղաքի տեսլականը

Վանաձոր՝ բիզնեսի և սպորտի քաղաք: 2022թ. հայտնի է փոքր և միջին բիզնեսի զարգացվածությամբ ու մարզական հզոր ենթակառուցվածքներով, որտեղ և՛ տեղացիները, և՛ այցելուները վայելում են մաքուր, գեղեցիկ ու խաղաղ միջավայրը և կյանքի բարձր մակարդակը:


4. Սոցիալ – տնտեսական նկարագիրը

4.1. Իրավիճակն ըստ ոլորտների

4.1.1. Դեմոգրաֆիա

Վանաձորն ունի մոտ 105 հազար բնակիչ: Ըստ Ազգային վիճակագրական ծառայություն տվյալների՝ 2004թ. (հունվար 1-ի դրությամբ) այն եղել է 106100: Ինչպես ցույց են տալիս այս վիճակագրական ցուցանիշները բնակչության թիվը տարեցտարի նվազում է հիմնականում բնակչության արտահոսքի պատճառով: Վերջին 5 տարիներին այն նվազել է 2%: 2008 թ. ընթացքում Վանաձորում ծնվել է 1380 երեխա, մահացել է 1117 մարդ: Ամուսնացել են 569 զույգ, ամուսնալուծվել՝ 172-ը: Ըստ Վանաձորի անձնագրային բաժնի տվյալների՝ 2008 թ. ընթացքում Վանաձոր բնակչության են եկել և հաշվառվել 535 մարդ և 686 մարդ դուրս են եկել հաշվառումից:

ԱՂՅՈՒՄԱԿ 4 Վանաձորի բնակչությունն ըստ սեռի և տարիքային խմբերի 2009թ. հունվարի դրությամբ:



* Աղբյուր. Ազգային վիճակագրական ծառայություն, մշակված աշխատանքային խմբի կողմից

4.1.2. Կրթություն

Վանաձորի ավելի քան երկու տասնյակ նախադպրոցական ուսումնական հաստատություններ են հաճախում 3140 երեխա (մինչև 6 տարեկան): Թվով 30 միջնակարգ դպրոցներում (այդ թվում՝ Վանաձորի ֆիզիկամաթեմատիկական թեքումով դպրոցում) սովորողների թիվը կազմում է 11615, թիվ 1 հատուկ դպրոցում (հաշմանդամ երեխաների համար նախատեսված հատուկ պայմաններով դպրոց) սովորում են 244 երեխաներ: Քոլեջների և ուսումնարանների ուսանողների ընդհանուր թիվը մոտենում է 1200-ի:

ԴՊՐՈՑՆԵՐ

Պարոցների քանակը	Աշակերտների թիվը
30 դպրոց	11615

Ուսումնական հաստատություն	Ուղղվածությունն ու մասնագիտացումը
թվով 28 միջնակարգ դպրոց	12 ամյա միջնակարգ կրթություն
Ֆիզիկամաթեմատիկական թեքումով դպրոց	Ֆիզիկա-մաթեմատիկական թեքումով դպրոց «Էվրիկա»
Վանաձորի թիվ 1 հատուկ դպրոց	հաշմանդամ երեխաների համար, հատուկ պայմաններով դպրոց
Պետական տեխնոլոգիական քոլեջ	հագուստի մոդելավորողներ, կարի տեխնոլոգներ, մարկետինգ և մենեջմենթ
Պետական ճարտարագիտական քոլեջ	Ֆիզիկամաթեմատիկական թեքումով երկամյա ուսուցում
Պետական բժշկական քոլեջ	բուժքույրեր, մանկաբարձներ, ատամնատեխնիկներ, դեղագործներ
Մանկավարժական քոլեջ	Մանկավարժական թեքումով երկամյա ուսուցում
Գյուղատնտեսական քոլեջ	գյուղատնտեսներ ու մեխանիզատորներ
Երաժշտական ուսումնարան	դասական երաժշտական գործիքներ ու հայկական ազգային նվագարաններ, վոկալ

4.1.3. Սպորտ

Վանաձորն ունի հարուստ մարզական ավանդույթներ: Այսօրվա Վանաձորի սպորտային կյանքը հիմնականում կառուցվում է հետևյալ մարզական կազմակերպություններում՝ Վանաձորի քաղաքային մարզադաշտ, Ըմբշամարտի համալիր, Ա. Ազարյանի անվան մարմնամարզական դպրոց, Օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզաձևերի մարզադպրոց, Ծանրամարտի մասնագիտացված մարզադպրոց, Թիվ 7 համալիր մանկապատանեկան մարզադպրոց, Մենապայքարային մարզաձևերի մասնագիտացված մարզադպրոց, Օլիմպիական հերթափոխի աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոց, Ֆուտբոլի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց, “Տարոն” համալիր մանկապատանեկան մարզադպրոց, Լոդի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց: Վերջերս բացվեց Վանաձորի շախմատի դպրոցը, որը հրաշալի պայմաններ է ստեղծում երեխաների ու պատանիների համար՝ այս սպորտաձևում հմտանալու:

2008թ. օլիմպիական խաղերին Վանաձորի բնցքամարտի դպրոցի սան Հրաչիկ Ջավախյանը դարձել է օլիմպիական բրոնզե մեդալակիր: Հայտնի է Վանաձորի ըմբշամարտի դպրոցը, որի սաները վերջին տարիներին պարբերաբար դառնում են Եվրոպայի և աշխարհի չեմպիոններ: Ինչպես նաև թեթև աթլետիկայի դպրոցով: 2011թ. Սամվել Տեր-Սահակյանը դարձավ մինչև 18 տարեկանների շախմատի աշխարհի չեմպիոն:

Վանաձորում առկա սպորտային ենթակառուցվածքները, վանաձորցի մարզիչների և մարզիկների միջազգային ասպարեզներում ձեռք բերած հաջողություններն ու հաղթանակները լավ հիմք են հանդիսանում համայնքը զարգացնել սպորտային ուղղությամբ: Այս ոլորտը ներկայումս ունի բոլոր նախադրյալները Վանաձոր քաղաքի իմիջում զգալի տեղ գրավելու և համայնքի զարգացման բնագավառում էական կշիռ ունենալու համար:

4.1.4. Մշակույթ

Վանաձորում գործում են վեց երաժշտական դպրոցներ, որտեղ՝ 6 տարեկանից սկսած երեխաները սովորում են նվագել դասական և հայկական ազգային նվագարաններ: Վանաձորում գործում են նաև մեկ գեղարվեստի և մեկ պարարվեստի դպրոց:

Քաղաքի մշակութային համայնապատկերը լրացնում են տասը գրադարանները, երեք մշակույթի տները, կամերային երգչախումբը, կամերային նվագախումբը, «Հորովել» երգի-պարի համույթն ու Երգի թատրոնը:

Վանաձորում են գտնվում այնպիսի հայտնի մշակութային կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Աբելյանի անվ. պետական դրամատիկական թատրոնը, Ազնավուրի անվան մշակույթի պալատը, Վանաձորի պետական տիկնիկային թատրոնը, Ստ. Ջորյանի տուն-թանգարանը, Լոռի-Փամբակի տարածաշրջանի երկրաբանական թանգարանը, Վանաձորի պետական պատկերասրահը:

Վանաձորում ապրում և ստեղծագործում են բազմաթիվ արվեստագետներ՝ նկարիչներ, գրողներ, երաժիշտներ: Քաղաքը հայտնի է նաև իր երիտասարդական ջազ և ռոք խմբերով («Սքրիմ», «Որդան Կարմիր» և այլն): Հաճախ Վանաձորում իրենց մշակութային ծրագրերով հանդես են գալիս Հայաստանում և արտերկրում մեծ համբավ վայելող արվեստագետներ:

4.1.5. Տրանսպորտ և կապ

Համայնքային ենթակառուցվածքի ճանապարհները 161 կմ են: Վանաձորով է անցնում Հարավկովկասյան երկաթգիծը: Դեպի արևմուտք գնացող գիծը Գյումրիով դուրս է գալիս Երևան, իսկ արևելք գնացող գիծը Սանահին կայարանով հասնում է Թբիլիսի: Վանաձորում կան 28 տրանսպորտային կանուրջներ և էստակադա, 32 հետիոտն կանուրջներ:

Քաղաքի ուղևորատար երթուղիներում ընդգրկված են 162 ավտոբուսներ և երթուղային տաքսիներ: Գրանցված են ու արդյունավետ գործում են մոտ մեկ տասնյակ մասնավոր տաքսի ծառայություններ:

Քաղաքում իրենց ծառայություններն են առաջարկում Հայաստանում գործող հեռահաղորդակցության ոլորտի առաջատար երկու մատակարարները (Արմենտել, Վիվասել), ինչպես նաև ինտերնետային կապի առաջատար ընկերությունները:

4.1.6. Արտաքին կապեր և հարաբերություններ

Վանաձորն իր արտաքին կապերն ու միջազգային համագործակցությունն իրականացնում է արտասահմանի քույր քաղաքների հետ համատեղ ծրագրերի ու միջոցառումների իրականացման, ինչպես նաև Հայաստանում իրենց գործունեությունը ծավալած միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքով:

Վանաձորի և քույր քաղաքների միջև կնքվել են պայմանագրեր, համաձայն որոնց քույր քաղաքների միջև առկա է համագործակցություն մշակույթի, տուրիզմի, տնտեսության, կրթության, առողջապահության և սպորտի բնագավառներում:

Վանաձորի քույր քաղաքներն են՝

- Մաարդու, Էստոնիա 2007-ից,
- Բաթումի, Վրաստան 2006-ից,
- Կիսլովոդսկ, Ռուսաստան 2005-ից,
- Պոդոլսկ, Ռուսաստան 2004-ից,
- Յյուչժոու, Չինաստան 2001-ից,
- Բանյո, Ֆրանսիա 1967-ից,
- Փասադենա, ԱՄՆ 1992-ից,

Կովկասյան քաղաքներից ցանցի շրջանակներում առկա է սերտ համագործակցություն

- Լայպցիգ, Գերմանիա 2008-ից:


Առկա է համագործակցություն Ֆրանսիայի Մարսել քաղաքի հետ՝ Լոռու մարզի մակարդակով: Երկխոսություն է ծավալված ևս մի քանի քաղաքների հետ, ինչը կարող է բերել համագործակցության խորացման:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

- Վանաձորի և քույր քաղաքների միջև առկա համագործակցության ամրապնդում և ընդլայնում՝ ներգրավելով համագործակցության նոր ոլորտներ: Վանաձորի քաղաքապետարանը շարունակելու է սերտ համագործակցությունը բոլոր այն երկրների և քաղաքների հետ, որոնց հետ մինչ այս ձևավորվել են ջերմ և կառուցողական հարաբերություններ: Մեծ ուշադրություն է դարձվելու մշակութային, մարզային, սոցիալական և տնտեսական համագործակցությանը: Շարունակաբար զարգացվելու են հարաբերությունները Բանյո, Բաթումի, Մասարդու, Վառնա, Փասադենա, Պոդոլսկ և այլ քաղաքների հետ:
- Սփյուռքի հետ հարաբերությունների ընդլայնման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի իրականացում:
- Հայաստանում գործունեություն ծավալող տեղական և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ անմիջական կապի ստեղծում և համատեղ ծրագրերի իրականացման վերաբերյալ քննարկումների իրականացում:
- Հայաստանում գործունեություն չծավալող, սակայն այս տարածաշրջանի հետ դրամաշնորհային և այլ տիպի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ կապի ստեղծում և համատեղ ծրագրերի իրականացմանն ուղղված գործունեության ծավալում:

4.1.7. Տեղական իրնքնակառավարում, քաղաքապետարան

Վանաձոր քաղաքի տեղական ինքնակառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության “Տեղական ինքնակառավարման մասին” օրենքի համաձայն: Քաղաքի Ավագանին բաղկացած է 14 հոգուց: Համայնքը ղեկավարում է քաղաքապետը՝ իր աշխատակազմի միջոցով, որն ունի այսպիսի կառուցվածք.



ՎԱՆԱՁՈՐԻ ԶԱՂԱԶԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


- ձ Փոքր և միջին բիզնեսի զարգացում: Հիմնվելով Վանաձոր քաղաքի աշխարհագրական դիրքի և առկա տնտեսական հզորությունների և պոտենցիալ ներուժի վրա ջանքեր գործադրել Վանաձորը դարձնելու տարածաշրջանային՝ մասնավորապես հայ-վրացական անդրսահմանային տնտեսական կենտրոն: Նպաստել Վանաձոր քաղաքում թեթև արդյունաբերության և IT տեխնոլոգիաների զարգացմանը, մասնավորապես կարի արտադրության, գյուղմթերքների վերամշակման, առևտրի սպասարկման, ծառայությունների մատուցման և բարձր տեխնոլոգիաների զարգացման ոլորտներում:
- ձ Նպաստել համայնքի բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և ֆիզկուլտուրայի զարգացմանը: Վանաձոր քաղաքում մարզական խաղահրապարակների հիմնում: Աջակցել համայնքի տարբեր հատվածներում բակային ժամանակակից խաղահրապարակների կառուցմանը:
- ձ Նպաստել Վանաձորում պրոֆեսիոնալ սպորտի զարգացմանը, ինչը ենթադրում է համայնքի սպորտային ենթակառուցվածքների բարելավում, հանրապետական, միջազգային մրցաշարերի անցկացման հնարավորություն:
- ձ Աջակցություն շրջակա միջավայրի պահպանությանը և կանաչ տարածքների ավելացմանը: Նորարարական տեխնոլոգիաների կիրարկմամբ նպաստել եվրոպական չափորոշիչներին համապատասխան քաղաքային էկո-տնտեսության կառուցմանը: Մշակել քաղաքի կանաչ հատվածների ավելացման և պահպանման պլան: Նպաստել համայնքում այգիների բարեկարգմանը և նոր այգիների կառուցմանը: Նպաստել քաղաքի հյուսիսային հատված անտառների վերականգնմանը:
- ձ Վանաձոր համայնքի ներհամայնքային ենթակառուցվածքների բարելավում, որը ենթադրում է ներհամայնքային ճանապարհների ընթացիկ և կապիտալ վերանորոգում, քաղաքի լուսավորման ցանցի ընդլայնում, հասարակական հանգստի վայրերի ավելացում և բարելավում, ինչպես նաև այլ ենթակառուցվածքների ընթացիկ և կապիտալ վերանորոգում:
- ձ Նպաստել Վանաձորում առողջապահական տուրիզմի զարգացման կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրի և գործողությունների պլանի կազմմանը:
- ձ Նպաստել մշակութային տուրիզմի կայացմանը: Վանաձոր համայնքի հոգևոր և մշակութային կյանքի բարելավում: Բարձրացնել հասարակության մշակութային մակարդակը և մշակութային արտադրանքի որակն ազգային մշակութային հիմքերի պարտադիր պահպանման: Նպաստել լոռվա պատմամշակութային ժառանգության պահպանմանը և մշակութային տուրիզմի զարգացմանը:
- ձ Նպաստել համայնքում կրթական համակարգի զարգացմանը: Խթանել Վանաձորը հյուսիսային տարածաշրջանային կենտրոն դարձնելուն ուղղված միջոցառումների և ծրագրերի իրականացմանը:
- ձ Նպաստել համայնքում գործող ԲՈՒՀ-երի կրթական ծրագրերի որակի բարձրացմանը, նոր, արդի մեծ պահանջարկ վայելող մասնագիտությունների ուսուցմանը և գործազրկության կրճատմանը:
- ձ Նպաստել համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերում օտարերկրյա կապիտալի ներգրավմանը, միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը:
- ձ Նպաստել համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերում քույր քաղաքների ներգրավմանը և համատեղ ծրագրերի իրագործմանը:

4.1.8. Տնտեսություն


Այժմ Վանաձորի տնտեսությունը հիմնված է փոքր և միջին բիզնեսի վրա, որի հիմնական ոլորտներն են փոքր արտադրությունները, ծառայություններն ու առևտուրը: Վերջիններս հիմնականում միտված են ներքին սպառման պահանջների բավարարմանը: Ամենախոշոր 50 հարկատուները հիմնականում պետական բյուջետային կազմակերպություններն են (այդ թվում ուսումնական հաստատությունները) և փոքր ու միջին բիզնեսը: Ամենաշատ աշխատողներ (100ից ավել) ունեցող կազմակերպությունները նույնպես պետական բյուջետային կազմակերպություններն են (12 կազմակերպություն) և միայն մի քանիսն են (5 կազմակերպություն) առևտրային կազմակերպություններ:

Համայնքում գործում են շուրջ 2847 փոքր և 1970 միջին բիզնեսներ, որոնց հիմնական ուղվածությունը առևտուրն է և սպասարկումը: Վանաձոր քաղաքում գործում են նաև կաթի վերամշակման, զովացուցիչ ընպելիքների, շինարարական նյութերի արտադրություններ, որոնք հիմնականում սպառում են ներքին պահանջարկի մի մասը միայն: Նշված ոլորտներից մեծ պոտենցիալ ունի հատկապես գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտը, ինչը պայմանավորված է քաղաքին մոտ գտնվող գյուղական համայնքների առկայությամբ:


Վանաձորի գործազուրկների թիվը
 Վանաձորի ՁՄԿ-ում հաշվառված են 5370 գործազուրկներ 01.01.2011թ. դրությամբ



Վանաձորի գործազուրկների վերլուծությունը ըստ տարիքի 01.01.2011թ. դրությամբ



Վանաձորի գործազուրկների վերլուծությունը ըստ կրթության 01.01.2011թ. դրությամբ



Վանաձորում գործում են նի շարք ընկերություններ, որոնց արտադրանքը արտահանվում է երկրի սահմաններից դուրս (դրանք հիմնականում կարի ֆաբրիկաներն են, որոնք կատարում են եվրոպական

N	Անվանում	N	Անվանում
1	Հայէկոնոմբանկ	8	Պրո Կրեդիտ Բանկ
2	ԱԳԲԱ Կրեդիտ Ազրիկոյ Բանկ	9	Կոնվերս Բանկ
3	Յունիբանկ	10	Արդշինհիմվեստ Բանկ
4	Անեյիք Բանկ	11	Բիբլոս Բանկ Արմենիա
5	Արարատ Բանկ	12	ՎՏԲ Բանկ
6	Ինեկորբանկ	13	Առեքսիմ Բանկ
7	Հայբիզնես Բանկ		

ֆիրմաների պատվերներ): Շատ ընկերություններ իրենց արտադրանքն ու ծառայությունները վաճառում են քաղաքի ու մարզի սահմաններից դուրս:

N	Անվանում	N	Անվանում
1	“Արեգակ”	3	“Կամուրջ”
2	“Հորիզոն”	4	“Ֆինկա”

ԱՂՅՈՒՍԱԿ 6. Վանաձորում իրենց մասնաճյուղերն ունեն Հայաստանում գործող 13 բանկեր:*

ԱՂՅՈՒՍԱԿ 7. Վանաձորում գործում են 4 ունիվերսալ վարկային կազմակերպությունները, որոնք

Տնտեսության հիմնական ու հեռանկարային ճյուղերը

Վանաձորի պատմության, ռեսուրսների, տնտեսական հնարավորությունների, մրցակցային առավելությունների ու ներուժի ուսումնասիրությունը հանգեցնում է այն մտքին, որ Վանաձորում տնտեսությունը կարող է զարգանալ հենվելով փոքր և միջին բիզնեսի վրա:

Խորհրդային ժամանակներից մնացած արտադրական հզորություններն ու ռեսուրսները վաղուց արդեն արդիական չեն և չեն կարող զարգանալ առանց հսկայական ֆինանսական միջոցների, տնտեսական բարեփոխումների և քաղաքական ճկուն ռազմավարության:

Խոսքն այն ռեսուրսների մասին է, որոնք դեռևս կարելի է համարել արդիական և որոնք վերջին տարիներին պարբերաբար թարմացվել են: Ուստի անհրաժեշտ է առկա արտադրական տարածքները վերակազմավորել և բիզնեսի արդի հեռանկարային ու տեխնոլոգիապես զարգացած ճյուղերի ներդրմամբ փոխել հին. խարխլված ու բարոյապես մաշված տնտեսության պատկերը:

Ներկայումս Վանաձորում աշխատում են երեք կարի ֆաբրիկաներ, որոնք հիմնականում կատարում են եվրոպական և ամերիկյան ֆիրմաների պատվերները: Այս ոլորտը պետական ուղղորդված և երկարաժամկետ քաղաքականության դեպքում մեծ պոտենցիալ ունի զարգանալու և գերակա ճյուղ համարվելու:

Վանաձորը հայտնի է իր առողջարանով: Մեղմ կլիման ու գեղատեսիլ բնությունը ապահովում է տարեկան առնվազն 10 000 մարդու հոսքը Վանաձոր ամռան ամիսներին: Այս ոլորտը նույնպես համարվում է պոտենցիալ գերակա ճյուղ, քանզի Վանաձորի «Արմենիա» առողջարանային համալիրի բազայի վրա հնարավորություն կա ընդլայնելու ծառայությունների բազան և սպասարկման մակարդակի բարձրացմամբ ու ճիշտ մարկետինգային քաղաքականությամբ իրատեսական հիմքեր կան ոլորտը էականորեն զարգացնելու:

Վանաձորի քաղաքային համայնքը կարևորում է առողջարանային ոլորտի զարգացումը և դրա պլատֆորմի վրա նաև տուրիզմի զարգացման հեռանկարները: Այս ոլորտի զարգացմանն ուղղված ռազմավարության մշակման խնդիրը քաղաքապետարանի համար հանդիսանում է առաջնային: Համայնքը աշխատանքներ է տանում ոլորտի զարգացմանն ուղղված ռազմավարության մշակման ուղղությամբ:

Տեքստիլ արդյունաբերություն

Վանաձորում գործող երեք հիմնական կարի ֆաբրիկաները (“Գավ-Գար”, “Բագուն”, “Գլորիա”) սկսեցին մասնակիորեն գործել՝ կատարելով արևմտյան ընկերությունների պատվերները: Այդ ֆաբրիկաներն այժմ գործում են իրենց հզորությունների 30 – 40% չափով: Վանաձորում վերջին տարիներին ձևավորվեցին նաև կարիմի քանի փոքր արտադրամասեր, որոնք աշխատում են հիմնականում տեղական շուկայի համար: Վերջիններիս արտադրանքը վաճառվում է Երևանի, Վանաձորի և այլ քաղաքների շուկաներում և տոնավաճառներում:

Աշխատանքային ժամ “Գավ-Գար” կարի ֆաբրիկայում

Վանաձորում գործող կարի ֆաբրիկաները հիմնականում կարողանում են կազմակերպել արտադրական և մատակարարման գործընթացը: Ոլորտի թույլ կողմը պրոֆեսիոնալ ու արդյունավետ շուկայավարումն է, ոլորտի որակյալ կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, սպասարկոց մի շարք արտադրությունների բացակայությունը:

Այժմ Վանաձորի տեքստիլի ոլորտում ընդգրկված են ավելի քան 1000 աշխատող, ինչը բավականին լուրջ թիվ է Վանաձորի համար:

ՊԱՀԱՆՁԱՐԿ

Քանի որ Վանաձորում գործող երեք հիմնական կարի ֆաբրիկաները կատարում են արևմտյան գործընկերների պատվերներ, ապա շուկայի այս ոլորտում պահաջարկը համապատասխանում է համընդհանուր պահանջներին՝ բարձր որակ, երկկողմ ընդունելի գներ, պատվերների ժամանակին և ճշգրիտ կատարում:

Այս գործընթացը ընթանում է պայմանագրային խիստ պայմաններում: Սա նշանակում է, որ այսօր ոլորտի ձեռնարկությունները մեծապես կախված են արտասահմանյան պատվիրատուներից որոնք էլ որոշում են պայմանները: Նաև նշանակում է, որ գործող համեմատաբար մեծ կարի ֆաբրիկաները արտադրատեսակի ընտրության հարցում չեն կարող վարել սեփական քաղաքականություն, ունենալ սեփական դիզայնով արտադրված ապրանքատեսակներ:

Գործող փոքր արտադրությունները, անհատ դերձակները որոնք աշխատում են տեղական շուկայի համար՝ հակված են բավարարել միջին որակի և էժան գին ունեցող պահանջարկ: Այս բաժինը հիմնականում բավարարում է միջինից ցածր եկամուտ ունեցող սպառողի պահանջարկը: Վերջիններիս կողմից արտադրած տաբատները, շրջագգեստները մեծամասամբ իրացվում են տոնավաճառներում և այլ շուկաներում:

ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՅՆԵՐ

Տեքստիլ ոլորտի գործունեության համար Վանաձորում կան անհրաժեշտ գրեթե բոլոր ենթակառուցվածքները (էլեկտրաէներգիայի և գազի կայուն մատակարարում, հեռախոսային ու ինտերնետ կապ, բանկային համակարգ): Սրանք այն ենթակառույցներն են, որ անհրաժեշտ են ցանկացած բիզնեսի զարգացման համար: Բացառություն է կազմում կադրերի պատրաստման ու վերապատրաստման համակարգը, որը այս ոլորտի համար բացակայում է: Խոսքը առավելապես հարակից ոլորտների մասնագետներին է վերաբերում՝ մոդելավորողներ, դիզայներներ, մարկետոլոգներ, մենեջերներ և այլն:

Համապատասխան պետական քաղաքականության ու ռազմավարության բացակայության պատճառով չեն իրականացվում ոլորտի զարգացման ծրագրեր ու միջոցառումներ:

ՕԺԱՆԳԱԿ, ՀԱՐԱԿԻՑ ՈԼՈՐՏՆԵՐ

Վանաձորի տեքստիլ արտադրության ոլորտի շուրջ ձևավորվել են նաև մի քանի օժանդակ ընկերություններ, ստեղծվել գործարար կապեր: Կարի ձեռնարկություններում խնդիրներ չեն առաջանում արտադրական միջոցների վերանորոգման, պահեստամասերի մատակարարման հարցերում: Այս ծառայությունները մատուցվում են Վանաձորում գործող ընկերությունների կողմից: Սակայն վերլուծության ընթացքում պարզվեց, որ ոլորտի զարգացման ու կլաստերային մոտեցում ապահովելու համար անհրաժեշտ է խթանել այնպիսի ընկերությունների հիմնումն ու արդյունավետ աշխատանքը, ինչպիսիք են՝

- Հումք և հումքի մատակարարում,
- Բարձր պրոֆեսիոնալ կարողություններով խորհրդատվական և տեղեկատվական կենտրոններ,
- Մոդելավորման ու դիզայներական ծառայություններ,
- Փաթեթավորում և պիտակավորում,
- Ֆիրմային խանութներ և դիստրիբյուցիա:

Վերն ասվածը փաստում է, որ ոլորտում զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է կատարել մեծ աշխատանք և այն իսկապես կարող է հեռանկարային լինել համայնքի տնտեսական զարգացման համար: Այս ոլորտում համայնքը նպաստելու է նոր շուկաների հայտնաբերմանը և ներդրումների ներգրավմանը:

Ոլորտի զարգացումը այսօր հիմանականում պայմանավորված է օտարերկրյա հիմնականում Եվրոպական և Ամերիկյան ֆիրմաների պատվերներից, ինչը ոլորտը դնում է ուղղակի կախվածության մեջ: Մինչդեռ ճիշտ և ճկուն մարկետինգային քաղաքաքանության մշակման դեպքում հնարավորություն կա նաև արտադրանք վաճառել տեղական և ԱՊՀ շուկաներում: Այս բնագավառում անհրաժեշտ է հետևողական պետական քաղաքականության իրականացում՝ ուղղված ոլորտի կայուն զարգացմանը:

- 👉 Հարկային արտոնությունների չկուն համակարգ, ինչը կնպաստեր տեղական արտադրության զարգացմանը՝ փոխարենը նվազեցնելով Թուրքիայից, Չինաստանից ներկրվող նմանատիպ արտադրանքների ծավալը: Նմանատիպ արտոնությունների համակարգի ներդրումը կնպաստեր նաև նոր ածխատատեղերի ստեղծմանը:
- 👉 Միջազգային կապիտալի ներգրավում: Համատեղ ձեռնարկությունների հիմնում, շուկաների ընդլայնում, տեղական շուկայում նոր բրենդների զարգացում:
- 👉 Համագործակցելով միջազգային դիզայներական ֆիրմաների հետ Վանաձոր համայնքում հիմնել դիզայներական ֆիրմա: Վեջինս հնարավորություն կնձեռնի մշտապես թողարկել ծուկայի պահանջարկներին համահունչ տեսականի, ինչն էլ կապահովի ներքին և արտաքին շուկաներում սեփական բրենդի զարգացմանը:

4.4. Չքոսաշրջություն և ամառային հանգստի կազմակերպում

Պահանջարկ

Հայաստանյան սպառողը ակնկալում է առկա սպասարկման միջին որակին չզիջող և հանգստյան տներում առաջարկվող ցածր գներ: Գրավում է առողջության վերականգնման և ամառային շոգից փախուստը համատեղելու հնարավորությունը,

Օտարերկրյա զբոսարջիկների համար՝ միջազգային ստանդարտներին և արտասահմանցիների ակնկալիքներին համապատասխան հյուրանոցներ, սնունդ և գրագետ սպասարկում:

ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Վանաձորը գտնվում է Երևանից դեպի Հայաստանի հյուսիս ևՎրաստանտանող ճանապարհին, ինչը բարձրացնում է Վանաձորի գրավչությունը որպես տարանցիկ կետ: Վանաձորի անմիջական հարևանությամբ են գտնվում մի շարք պատմամշակույթային բարձրարժեք հուշարձաններ, որոնք ընդգրկված են Հայաստան այցելող օտարերկրյա զբոսաշրջիկների բազմաթիվ տուր-փաթեթների մեջ: Առանձնապես ուշագրավ են Սանահինի ու Հաղպատի վանական համալիրները (ընդգրկված են UNESCO-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում), Օձունի համալիրը, Ախթալայի վանական համալիրն ու բերդը, Լոռիբերդի և Տաշիրի բերդի ավերակները, Դսեղի ս.Գրիգոր Բարձրաքաշ վանքը և այլն:

Ներկայումս օտարերկրյա զբոսաշրջիկների գրեթե ոչ մի խումբ Հայաստան այցելելիս չի հանգրվանում Վանաձորում՝ համապատասխան հյուրանոցային պայմանների և համապատասխան սպասարկման բացակայության պատճառով:

Վանաձորի առանձնահատուկ բնակլիմայական պայմանները՝ մեղմ ամառն ու ձմեռը, գեղեցիկ ու հարուստ բնությունը, հանքային ջրի առկայությունը և քաղաքային հանգիստ միջավայրը անցած դարի 60–80թթ. քաղաքը դարձրել էին հայաստանցիների (հատկապես Երևանցիների) ամառային հանգստի սիրված վայր: 90-ական թթ. տնտեսական ճգնաժամի ու շուկայական տնտեսության անցման շրջանում (սեփականաշնորհվեցին և որպես այդպիսիք դադարեցին գործել բոլոր զբոսաշրջային ենթակառուցվածքները) Վանաձորը կորցրեց իր գրավչությունը: Մակայն այսօր այն կարող է վերականգնել կորցրածը՝ հարմարեցնելով առաջարկը առկա պահանջարկին:

Վանաձորում նկատելիորեն զարգանում է մասնավոր առողջապահությունը: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս զարգացնել նաև առողջապահական տուրիզմը (օր. ատամնաբուժությունը): Այս հանգամանքը բավականին գրավիչ է նաև այն պատճառով, որ ստոմատոլոգիայում իրատեսական է որակի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին՝ ապահովելով մրցունակ գներ:

Ելնելով վերագրյալից ակնհայտ է, որ Վանաձորը տուրիզմի զարգացման բնագավառում պետք է առաջնորդվի առկա ռեսուրսները զարգացնելու ուղիով, որոնք են՝ առողջարանային և արկածային տուրիզմը, ամառային հանգստի կազմակերպումը:

Այսպիսով՝ Հայաստանի ներքին տուրիզմի բազմազանությունում Վանաձորի յուրահատուկ տուրիստական առաջարկի հիմնական բաղկացուցիչները պետք է լինեն՝

- Հայաստանում առկա սպասարկման միջին որակին չզիջող և հանգստյան տներում առաջարկվող միջին գներից ցածր գներ:
- Ամառային հանգիստ՝ համադրված քաղաքային յուրահատուկ միջավայրի հետ (կինո, թատրոն, համերգներ, ցուցահանդեսներ, սրճարաններ ու բարեր և այլն),
- Արկածային, սպորտային ու վրանային զբոսաշրջություն՝ միաժամանակ առողջապահական որոշ խնդիրներ լուծելու հնարավորությամբ:

Ներկայումս վանաձորի քաղաքային համայնքը «Համայնքների միության» և «Եվոռոեգիո»

կազմակերպության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում նախատեսում է Վանաձորում ստեղծել տուրիստական տեղեկատվական կենտրոն: Կենտրոնը հանդիսանալու է նաև անդրսահմանային տուրիստական կենտրոնների անդամ: Նախատեսվում է ստեղծել ինտերնետային քառալեզու պորտալ, որտեղ պոնտենցիալ զգոսաշրջիկներին կներկայացվի ինչպես Վանաձորի այնպես էլ ընդհանուր ռեզիոնալ տուրիստական ուղիների հետ կապված տեղեկատվություն:

ՊԱՀԱՆՁԱՐԿ

Հայաստանյան հանգստյան տները տեղացի հանգստացողներին այսօր առաջարկում են բավականին բարձր գներ երկրի հիմնական հանգստյան գոտիներում (Ջերմուկում, Դիլիջանում, Ծաղկաձորում, Հանքավանում, Աղավաձորում, Սևանում)՝ ունենալով միջին և միջինից բարձր որակ: Ավելի մատչելի գների դեպքում պայմանները չեն համապատասխանում առաջադրվող պահանջարկին: Մյուս կողմից՝ վերը նշված հիմնական հանգստյան գոտիները լիարժեքորեն չեն կարող առաջարկել այն, ինչ Վանաձորը (հանդարտ, քաղաքային միջավայր և մշակութային միջոցառումներ): Այսպիսով հայաստանյան սպառողը ակնկալում է երկրում առկա սպասարկման միջին որակին չզիջող և հանգստյան տներում առաջարկվող միջին գներից ցածր գներ: Երևանյան տուրիստական գործակալությունների շրջանում կա հստակ պահանջարկ օտարերկրյա տուրիստների 1-2 օրյա գիշերակացը կազմակերպելու հյուսիսային բնակավայրերից մեկում, որտեղ կապահովվեն հյուրանոցային համապատասխան (միջազգային ստանդարտներ) պայմաններ, սնունդ, մշակութային միջոցառումներ, հետաքրքիր հանգիստ (քաղաքային միջավայրին հատուկ ժամանց):

5. ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Վանաձորով է անցնում հանրապետական նշանակության մայրուղին, որն, ինչպես նաև քաղաքի կենտրոնական պողոտան, գտնվում է բարվոք վիճակում: Սակայն քաղաքի մյուս փողոցները երբեմն նույնիսկ մեքենայի համար դժվար անցանելի են: Քաղաքի կենտրոնը, որպես զբոսաշրջիկների համար հետաքրքիր միջավայր, դեռևս չի կարելի համարել գրավիչ: Չկան բարեկարգ հանգստի գոտիներ, այգիներ ու ջրային տարածքներ: Անհապաղ լուծում պահանջող հարց է խմելու ջրի որակի բարձրացումը (ֆիլտրել և ախտահանել), շուրջօրյա ապահովելով ջրամատակարարում: Վանաձորում առկա են կապի բոլոր միջոցները՝ բջջային հեռախոսակապ, ինտերնետ: Ջրոսաշրջիկների և այցելուների հարմարավետության և քաղաքում ազատ կողմնորոշվելու համար անհրաժեշտ է պարբերաբար հրատարակել Վանաձոր քաղաքի քարտեզը և ուղեցույցներ, որտեղ նշված կլինեն սպասարկման ոլորտի բոլոր ենթակառուցվածքները: Անհրաժեշտ է մասնագիտացված տուրիստական տեղեկատվական կենտրոնի կազմակերպումը, որը Վանաձորում մասնավորի և հասարակականի համագործակցության (Public Private Partnership) հրաշալի օրինակ կարող է ծառայել: Վանաձորում գործում են մի շարք ուսումնական հաստատություններ, այլանավորում են պատրաստել նաև տուրիզմի ոլորտի մասնագետներ: Այս խնդիրը դեռևս լուծված չէ:

ՍՊԱՍԱՐԿՈՂ, ՀԱՐԱԿԻՑ ՈԼՈՐՏՆԵՐ

Հյուրանոցներ ու B&B: Վանաձորում գործում են չորս հյուրանոցներ՝ ընդհամենը մոտ 70 հյուրանոցային համարներով, որտեղ կարող են ընդունել 75 – 155 հանգստացողի: Հյուրանոցային համարները 1-2-3 տեղանոց են: Հյուրանոցային մոտ 40-45 համարներն են, որ ինչ-որ չափով ընդունելի են օտարերկրյա զբոսաշրջիկների կողմից առաջադրվող ստանդարտներին/պահանջներին: Հյուրանոցային համարների մեկ անձի մեկ օրվա գները տատանվում են 8000–30000 դրամի սահմաններում: Հյուրանոցային համարներից բացի քաղաքում կան նաև B&B (մահճակալ և նախաճաշ) սկզբունքով գործող 12-15 կացարաններ ուր կարող են հանգրվանել մոտ 30 մարդ: Այս կացարաններում մեկ անձի գիշերումն արժե 5000 – 6000 դրամ:

Ռեստորաններ ու սրճարաններ: Հյուրընկալության կարևոր բաղադրիչներից են Վանաձորի ռեստորաններն ու սրճարանները: Վերջիններս հիմնականում ունեն համապատասխան ներքին և արտաքին ձևավորում, սակայն լուրջ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել հաճախորդների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ (պրոֆեսիոնալ մենյուներ, մատուցողների պատրաստվածություն, խաղաղ միջավայր և այլն):

Ժամանցի կազմակերպում: Վանաձորը լավ հնարավորություններ ունի ժամանց և մշակութային ծրագրերը կազմակերպելու համար: Գործում են դրամատիկական և տիկնիկային թատրոնները, մի շարք թանգարաններ: Վանաձորում կան ժողովրդական և դասական մշակույթը ներկայացնող ստեղծագործական կոլեկտիվներ: Հանգստացողների որոշակի հոսքի դեպքում մշակութային այս հաստատությունները պետք է պատրաստեն հատուկ ծրագրեր՝ հնարավորինս հետաքրքիր դարձնելու համար այցելողների առօրյան ու հանգիստը:

Տուրիստական գործակալություններ: Վանաձորում չկան զբոսաշրջիկներին ծառայություններ մատուցող մասնագիտացված գործակալություններ: Սա, մեր կարծիքով, պայմանավորված է նրանով, որ այստեղ այցելող օտարերկրյա զբոսաշրջային խմբերը որպես կանոն ուղեկցվում են Երևանյան գործակալների կողմից, կամ ինքնուրույն ճանապարհորդներ են: Հայաստանցիներն էլ Վանաձոր են այցելում անհատական նախաձեռնությունով: Վանաձորի տուրիստական բիզնեսը բացառապես ներկայացված է ավիա տոմսերի վաճառքով:

Վանաձորում բացակայում է հուշանվերների արտադրության և դրանց վաճառքի հատուկ մասնագիտացված խանութներ, որոնք կսպասարկեին հենց քաղաքի այցելուներին: Արդյունավետ գործում են դիզայներական, գովազդային և տպագրական բիզնեսներ, որոնք հետագայում կարող են լրացնել հուշանվերների և տուրիստների սպառման համար նախատեսված արտադրանքների և ծառայությունների՝ վերոնշյալ բացը:

Ներքին և արտաքին գործոնների վերլուծություն

Ստորև ներկայացվում է փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված (SWOT վերլուծություն):

Ներքին գործոններ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Բարենպաստ աշխարհագրական դիրք, գտնվում է միջպետականավտոմայրուղու ու երկաթգծի վրա: • Վանաձորը ռեզիդնալ վարչական կենտրոն է, գտնվում է Երևան Թբիլիսի միջպետական ճանապարհի կենճանապարհին • Բնակչության քանակով, հետևաբար ներքին շուկայով, Հայաստանի երրորդ խոշոր քաղաքն է, • Բնակլիմայական բարենպաստ պայմաններ, գեղատեսիլ բնություն • Փոքր և միջին ձեռներեցության աջակցության խորհրդատվական կենտրոնների հիմնում • Փոքր և միջին բիզնեսի զարգացման ուղղությամբ ՏԻՄ-ի կողմից ընդգծած ռազմավարական ծրագրերի մշակում, 	<ul style="list-style-type: none"> • Փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված պետական հեռանկարային քաղաքականության բացակայություն • Քաղաքը չունի ընդգծված յուրահատուկ մրցակցային առավելություն, • Գործարար հմտությունների, գիտելիքների ու բիզնեսմտածողության պակաս գործարարների մոտ, • Գրեթե բոլոր ոլորտներ ներթափանցած հովանավորչություն, • Գրծարար և այլ տեղեկատվության սակավություն, սահմանափակություն և անմատչելիություն, • Որակյալ գործարար խորհրդատվության և գործարար աջակցության բացակայություն, • Արդի պահանջներին համապատասխանող աշխատուժի վերապատրաստման հնարավորությունների բացակայություն, • Արտադրական հզորությունները և սարքավորումները ֆիզիկապես և բարոյապես մաշված են ու հնացած, • Գործարար գաղափարները նախաձեռնվում և իրականացվում են՝ ելնելով ոչ թե պահանջարկից, այլ ռեսուրսների առկայությունից

Արտաքին գործոններ

Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • Հիմնվելով ազատ արտադրական տարածքների առկայության վրա՝ Վանաձորը որպես ՀՀ մաքսային կենտրոն դարձնելու հնարավորություն, • Ելնելով Վանաձորում տնտեսության առանձին ոլորտների զարգացման պոտենցիալից՝ պետության կողմից հարկային բեռի թեթևացման կամ հարկերից ազատման քաղաքականության մշակում 	<ul style="list-style-type: none"> • Ոչ բարենպաստ օրենսդրական դաշտ, • Սխալ տնտեսական քաղաքականություն, Վանաձորը ընդգրկված չէ զարգացման համապետական ծրագրերում, • Տնտեսության մենաշնորհացման-մոնոպոլիզացիայի խորացում, • Հայաստան – Վրաստան սահմանային փոխհարաբերությունների թուլացում • Հարավային Կովկասի տարածաշրջանի քաղաքական անկայունություն, • Հայաստանում ներքաղաքական անկայունություն:

Ներքին և արտաքին գործոնների վերլուծություն

Ստորը ներկայացվում է սպորտի և մշակույթի բնագավառներին ուղղված (SWOT վերլուծություն):

Ներքին գործոններ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Հարուստ պատմամշակութային ժառանգություն • Տարբեր սպորտաձևերում օլիմպիական և աշխարհի չեմպիոններ • Մարզիչների պրոֆեսիոնալիզմ • Միջազգային ստանդարտներին համապատասխանող սպորտային կառույցներ 	<ul style="list-style-type: none"> • Համայնքի բնակչության շրջանում առողջ ապրելակերպի նկատմամբ անտարբերություն • Ժամանակակից խաղահրապարակների և մարզահրապարակների անբավարարություն, բացակայություն • Պատմաշակութային առկա ռեսուրսները, որպես տուրիստական պրոդուկտ ներկայացնելու հմտությունների պակաս • Տուրիստների սպասարկման ցածր մակարդակ (ենթակառուցվածքների վատթար վիճակ) • Բարձր սակագներ (ավիոտոմսեր, հյուրանոց,)

Արտաքին գործոններ

Հնարավորություններ	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • Համայնքում խաղահրապարակների և մարզահրապարակների կառուցմամբ հասարակության շրջանում առողջ ապրելակերպի և ֆիզկուլտուրայի նկատմամբ հետաքրքրության մեծացում, • Որոշ մարզաձևերի գծով համապետական և միջազգային հեղինակավոր մրցաշարերի անցկացում • Ներքին տուրիզմի զարգացում՝ մասնավորապես ամառային հանգստի բնագավառում 	<ul style="list-style-type: none"> • Տարածաշրջանային քաղաքական և տնտեսական հիմնախնդիրներ • Գլոբալ ճգնաժամ

6. Ֆինանսներ

ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Եկամուտների վերլուծություն

Վանաձորի համայնքի 2010թ. բյուջեն եկամուտների գծով կատարվել է 98.8%-ով, բյուջեով նախատեսված 2062162.1 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 2038437.2 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 253092.7 հազար դրամով:

Վանաձորի համայնքի բյուջեի եկամուտների կառուցվածքը

2010թ. փաստացի – 2038437.2 հազար դրամ

2009թ. փաստացի – 1785344.5 հազար դրամ


Վանաձորի համայնքի բյուջեի եկամուտների կառուցվածքը

(վարչական մաս)

2010թ. փաստացի – 1810986.2 հազար դրամ


2009թ. փաստացի – 1603272.0 հազար դրամ

222585,1
12,3% 31041,0
1,7% 2042,6
0,1% 16142,5
23,0%



- Զարկեր և տուրքեր
- Ռազոտոմական դրամաշնորհներ
- Սյլ եկամուտներ
- Չիմ-ին պետ. կողմից պատ. լիազ. իրակ. ծախսեր
- Տարեսկզբի ազատ մնացորդ

192640,4
12,0% 31024,9
1,9% 3113,8
0,2% 439190,5
27,4%





- Զարկեր և տուրքեր
- Ռազոտոմական դրամաշնորհներ
- Սյլ եկամուտներ
- Չիմ-ին պետ. կողմից պատ. լիազ. իրակ. ծախսեր
- Տարեսկզբի ազատ մնացորդ

Վանաձորի համայնքի բյուջեի եկամուտների կառուցվածքը

(ֆոնդային մաս)

2010թ. փաստացի – 361049.7 հազար դրամ

2009թ. փաստացի – 182072.5 հազար դրամ



- ▣ Անշարժ գույքի իրացումից մուտքեր
- ▣ Այլ հիմն. միջոցների իրացումից մուտքեր
- ▣ Սարեակզրի ազատ մնացորդ
- ▣ վարչ. մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացում

- ▣ Անշարժ գույքի իրացումից մուտքեր
- ▣ Այլ հիմն. միջոցների իրացումից մուտքեր
- ▣ Սարեակզրի ազատ մնացորդ
- ▣ Սուբվենցիա

7. Առաջնայնություններ, ծրագրեր և պրոյեկտներ

Ներկայացվող ծրագրերն ու պրոյեկտները ձևավորվել են Վանաձորի տնտեսության մեջ մեծ դեր կատարած մասնագետների ու ծրագրի փորձագետների համատեղ քննարկումների արդյունքում: Դրանք արժանացել են վանաձորցիների հավանությանը: Նախաձեռնությունների մեծամասնության իրականացմանը պատրաստ են մասնակցել Վանաձորի ինչպես մասնավոր, այնպես էլ հասարակական կազմակերպությունները, պետական կառույցները:

Առաջարկվող նախաձեռնություններն ու ծրագրերը հիմնականում ուղղված են Վանաձորի մրցակցային առավելությունների ձևավորմանը, գրավչության բարձրացմանը, տնտեսության հիմնական ու հեռանկարային ճյուղերի ամրապնդմանը:

	Ռազմավարական նպատակ 1	Նախատեսվող ժամանակահատվածը	Համայնքի ներդրում %	Ծրագրի արժեքը
1	Վանաձորը որպես փոքր և միջին բիզնեսի զարգացման կենտրոն	2012-2022		
1.1	Փոքր և միջին բիզնեսի զարգացման և աջակցության (խորհրդատվական) կենտրոնի հիմնում	2012	10%	€15000
1.2	Սկսնակ գործարարների համալիր աջակցության ծրագրերի կազմակերպում` ՓՄՁ տեխնոպարկի ստեղծում	2014-2015	10-15%	€120000
1.3	Վանաձորում նորարարությունների, նոր և տեղեկատվական տեխնոլոգիաների բիզնես ինկուբատորի ստեղծման հնարավորությունների ուսումնասիրում ու առաջարկության կազմում	2012-2013	10%	€22500
1.4	Վանաձորի տնտեսության հեռանկարային և հիմնական ճյուղերի (գրոսաշրջություն, տեքստիլ արդյունաբերություն) զարգացման համալիր ծրագրերի մշակում,	2012-2013	10-20%	€42000
1.5	Պետական մակարդակով Վանաձորը որպես ազատ տնտեսական գոտու կամ համարժեք այլ կարգավիճակի (ոլորտային) ռազմավարության որդեգրում	2012-2015		
1.6	Վանաձորի գործարանային լքված կամ չօգտագործվող տարածքների նպատակային օգտագործման ծրագիր	2012-2018	10%	€25000
1.7	Վանաձորը որպես ՀՀ Մաքսային կենտրոն (Վերջինս պետք է արժանանա ՀՀ կառավարության հավանությանը)	2012-2022		
1.8	Գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտի զարգացում	2012-2020	10-15%	€1430000
	Ռազմավարական նպատակ 2	Նախատեսվող ժամանակահատվածը	Համայնքի ներդրում %	Ծրագրի արժեքը
2	Վանաձորը որպես մարզական քաղաք			
2.1	Վանաձոր քաղաքում մարզական 25	2012-2015	20-30%	€475000

	խաղահրապարակների/մարզահրապարակների հիմնում			
2.2	Վանաձորի ըմբշամարտի դպրոցի նյութատեխնիկական բազայի ընդլայնում	2012-2014		
2.3	Վանաձորի բռնցքամարտի զարգացմանն ուղղված նյութաթեխնիկական բազայի ընդլայնում	2013-2015		
2.4	Վանաձորում ծանրամարտի, թեթև աթլետիկայի, բռնցքամարտի և ըմբշամարտի համապետական և միջազգային հեղինակավոր մրցաշարերի անցկացման համար տեխնիկական, շենքային և օժանդակ համակարգերի կայացում	2012-2018		
	Ռազմավարական նպատակ 3	Նախատեսվող ժամանակահատվածը	Համայնքի ներդրում %	Ծրագրի արժեքը
3	Վանաձորը որպես առողջարանային տուրիզմի քաղաք			
3.1	Վանաձորում առողջապահական տուրիզմի զարգացման կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրի և գործողությունների պլանի կազմում,	2012	10%	€18000
3.1.1	Վանաձորի առողջարանային համալիր կենտրոնի զարգացման ծրագիր	2012-2014	10%	€35000
3.2	Վանաձորում տուրիզմի զարգացմանը նպաստող ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում	2013-2014		
3.2.1	Սպիտակից և Դիլիջանից Վանաձոր եկող ճանապարհների մուտքերի բարեկարգման ծրագիր	2012-2014	20-30%	€75000
3.2.2	Ջրոսաշրջության և սպասարկման ոլորտի մասնագետների ուսուցման և վերապատրաստման կենտրոնի ստեղծման ծրագիր (Վանաձորի ուսումնական հաստատությունների բազայի վրա)	2012-2016	10%	€35000
3.2.3	Տեղական “Լոռի” հանքային ջրի և աղբյուրի ջրի արտադրության և բրենդի կայացման ծրագիր	2012-2016	10%	€650000
3.2.3	Տուրիստական տեղեկատվական, մշակութային, այցելուների սպասարկման կենտրոնի հիմնում	2013	10-20%	€40000
3.3	Վանաձորի շրջակա վնասված անտառների վերականգնման կարճաժամկետ ու միջնաժամկետ ծրագիր և գործողությունների ծրագիր	2013-2014	10-20%	€35000
3.4	Վանաձորի քարտեզի և տուրիստական ուղեցույցների հրատարակում	2012-2013	10-20%	€26000
3.5	Նպաստել Լոռու մարզում տուրիզմի՝ տուրստական ենթակառուցվածքների զարգացմանը՝ մասնավորապես զբոսաշրջային տների (B&B) և ֆերմերային տնտեսությունների համագործակցության կայացմանն ու ներդաշնակ զարգացմանը:	2012-2013	10%	€70000

	Ռ-ազմավարական նպատակ 4	Նախատեսվող ժամանակահատվածը	Համայնքի ներդրում %	Ծրագրի արժեքը
4	Վանաձորը որպես կրթական քաղաք			
4.1	Վանաձորի աշխատաշուկայում առկա մասնագետների պահանջարկի ուսումնասիրության իրականացում (սոցիոլոգիական հետազոտություն)	2012-2013թթ.	10%	€15000
4.2	Վանաձոր քաղաքում գործող ԲՈՒՀ-երի վերաբերյալ միասնական ինտերնետային պորտալի ստեղծում	2012-2013թթ.	10%	€10000
4.3	Վանաձորի ԲՈՒՀ-երում ինտերակտիվ հեռուստուցման համակարգի մշակում և ներդրում	2015-2018		
4.3	Վանաձորը հյուսիսային ռեգիոնի կրթական կենտրոն դարձնելու համար 10 տարվա ռազմավարության մշակում՝ (ներգրավելով միջազգային փորձագետների)	2012-2014	10%	€50000